ՀՖՖ Կարգապահական կոմիտեի և էթիկայի նիստի արձանագրությունը

2020 թվականի հուլիսի 2-ին տեղի ունեցավ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստը Ռուբեն Սինոյանի նախագահությամբ:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑ 1:

ՀՖՖ Գործադիր կոմիտեի միջնորդությունը ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեին «Արագած», «Տորպեդո», «Մասիս», «Լոկոմոտիվ», «Երևան» ֆուտբոլային ակումբների, ինչպես նաև բազմաթիվ անձանց վերաբերյալ՝ պայմանավորված խաղերում մասնակցություն ունենալու, պայմանավորված խաղեր կազմակերպելու և դրանց վերջնական արդյունքը մանիպուլյացիայի ենթարկելու հանգամանքով կարգապահական վարույթ սկսելու վերաբերյալ:

Օրակարգի հարցով ելույթ ունեցավ կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանը: Վերջինս նշեց, որ 2020 թվականի հունիսի 26-ին կայացած նիստի ընթացքում ՀՖՖ Պայմանավորված խաղերի դեմ պայքարի հարցերով փորձագիտական կոմիտեի (ժամանակավոր կոմիտե) կողմից ներկայացված զեկույցի, ինչպես նաև նույն փորձագիտական կոմիտեի կողմից հավաքագրված նյութերի և փաստերի հիման վրա ՀՖՖ Գործադիր կոմիտեն որոշում է ընդունել ներկայացնել միջնորդություն ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեին Արագած, Տորպեդո, Մասիս, Լոկոմոտիվ, Երևան ֆուտբոլային ակումբների, ինչպես նաև բազմաթիվ անձանց վերաբերյալ՝ պայմանավորված խաղեր կազմակերպելու և դրանց վերջնական արդյունքը մանիպուլյացիայի ենթարկելու հանգամանքով կարգապահական վարույթ սկսելու վերաբերյալ: Կոմիտեի նախագահը հայտնեց, որ միջնորդության հետ միասին Կարգապահական և էթիկայի կոմիտեին են փոխանցվել Պայմանավորված խաղերի դեմ պայքարի հարցերով փորձագիտական կոմիտեի՝ վերոնշյալ յուրաքանչյուր ակումբի մասով առանձին կազմված ամփոփ զեկույցները, ինչպես նաև այդ զեկույցների կազմման համար հիմք հանդիսացող հավաքագրված նյութերը, փաստերը և համապատասխան ապացույցները: Ռուբեն Սինոյանն ընդգծեց, որ նշված ապացույցները հավաքագրվել են ՀՀ իրավապահ մարմինների, մասնավորապես, ԱԱԾ-ի և Ինտերպոլի ազգային բյուրոյի, ինչպես նաև ՈՒԵՖԱ-ի, Սպորտռադար և Սթարլիզարդ ընկերությունների, բուքմեյքերական ընկերությունների և բուքմեյքերական շուկայի վերլուծությամբ զբաղվող արտասահմանյան գործակալությունների և այլ գործընկերությունների կողմից տրամադրված փաստերի, նյութերի և տեղեկությունների հիման վրա: Նա նաև նշեց, որ Փորձագիտական կոմիտեն հարցազրույցներ է ունեցել տասնյակ անձանց հետ, ովքեր կարող էին ներգրավված լինել կասկածելի խաղերի կազմակերպման գործընթացում կամ լրացուցիչ տեղեկություններ տրամադրել այդ կապակցությամբ:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի անդամները հնարավորություն ունեցան անձամբ ուսումնասիրել Փորձագիտական կոմիտեի կողմից պատրաստված զեկույցները բոլոր հինգ ակումբների վերաբերյալ, ինչպես նաև ծանոթացան բոլոր այն նյութերի, փաստերի և ապացույցների հետ, որոնք տրամադրվել էին ՀՀ իրավապահ մարմինների (ԱԱԾ, Ինտերպոլի Ազգային Կենտրոնական Բյուրո), ՈՒԵՖԱ-ի, Սպորտռադար և Սթարլիզարդ ընկերությունների և այլ գործընկերների կողմից, և որոնք հիմք էին հանդիսացել Փորձագիտական կոմիտեի զեկույցների պատրաստման համար:

Առկա փաստական հանգամանքների հիմքերն ուսումնասիրելուց հետո Կարգապահական և էթիկայի կոմիտեի անդամները հաստատեցին ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված իրավական հիմքերը և շրջանակը: Մասնավորապես.

Հոդված 12.1. Ապացուցումը կարգապահական վարույթում

- 12.1.01. Իրավասու կարգապահական մարմինը ապացույցների գնահատումն իրականացնում է բացառապես ինքնուրույն:
- 12.1.02. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ բավարարության տեսանկյունից:
- 12.1.03. Կարգապահական մարմինը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Հոդված 13.1. Ապացույցների տեսակները

- 13.1.01. Ցանկացած ապացույց, որը չի խախտում մարդու արժանապատվությունը, կարող է օգտագործվել կարգապահական վարույթի ընթացքում: Կարգապահական վարույթի շրջանակներում որպես ապացույց կարող են օգտագործվել պաշտոնական զեկույցներ և արձանագրություններ, վկաների հարցաքննություններ, կողմերի և ՀՖՖ պաշտոնյաների հարցաքննություններ, տեղանքի զննություններ, փորձագետների կարծիքներ, հեռուստահաղորդումներ և տեսաձայնագրություններ, անհատական խոստովանություններ, այլ փաստաթղթեր և նյութեր (այդ թվում՝ շահումով խաղերում խարդախությունների մասին հաղորդումներ):
- 13.1.02. Կարգապահական մարմինները կարող են ցանկացած դեպքում պահանջել հավելյալ ապացույցներ:
- 13.1.03. ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի պաշտոնական զեկույցներում ներառված փաստերը համարվում են հավաստի: Այդուհանդերձ, վարույթի ընթացքում կարող են ներկայացվել այդ փաստերի ոչ հավաստի լինելու մասին ապացույցներ:

Հոդված 22. Խաղերի ամբողջականություն և պայմանավորված խաղեր

- 22.01 Բոլոր ֆուտբոլային սուբյեկտները պետք է զերծ մնան բոլոր այն գործողություններից, որոնք կարող են վնասել խաղերի և մրցաշարերի ընթացքին և պետք է համագործակցեն ՀՖՖ-ի հետ՝ կանխելու նմանատիպ դեպքերը:
- 22.02 Խաղերի և մրցաշարերի ընթացքը խախտվում է բոլոր այն դեպքերում, երբ անձը.
  - ✓ իր գործողությամբ կատարում է օրենքի խախտում և/կամ անուղղակի կերպով փորձում է ազդել հանդիպման արդյունքի վրա՝ օգուտ ստանալով դրանից
  - ✓ ուղղակի կամ անուղղակի կերպով խաղադրույք է կատարում մրցաշարի խաղի վրա կամ ունի անմիջական կամ ոչ անմիջական ֆինանսական հետաքրքրություն
  - ✓ չարաշահելով իր պաշտոնական դիրքը՝ տարածում է այնպիսի տեղեկատվություն, որը հանրային հրապարակման ենթակա չէ և կարող է վնաս հասցնել խաղի կամ մրցաշարի ընթացքին
  - ✓ անմիջապես չի ահազանգում ՀՖՖ-ին ցանկացած նմանատիպ պահվածքի առկայության դեպքում:

Հոդված 23. Պայմանավորված խաղերի կազմակերպումը, կազմակերպման փորձ կատարելը կամ դրա մասին չհայտնելը

23.01 Պայմանավորված խաղերի կազմակերպումը, մասնավորապես, ֆուտբոլիստներին, մրցավարներին, մարզիչներին, թիմերի ղեկավարներին կամ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ (ոչ սիրողական) ֆուտբոլի մրցումների մյուս մասնակիցներին, կազմակերպիչներին և ֆուտբոլային այլ սուբյեկտներին անձամբ կամ միջնորդի միջոցով իրենց կամ որևէ այլ անձի համար դրամ, տարադրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը կամ նույն անձանց կողմից ստանալը՝ այդ մրցումների արդյունքների վրա ազդելու նպատակով առաջացնում է.

Ֆիզիկական անձանց համար՝

- տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև հինգհազարապատիկի (2,000,000-5,000,000 ՀՀ դրամ) չափով, և/կամ
- որակազրկում /ֆուտբոլիստի համար/ 1-ից մինչև 2 տարի ժամկետով, և/կամ
- որևէ ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու արգելք՝ 3 տարուց մինչև ցմահ ժամկետով:

Իրավաբանական անձանց համար՝

- տուգանք նվազագույն աշխատավարձի հինգ հազարապատիկից մինչև տասնհինգհազարապատիկի (5,000,000-15,000,000 ՀՀ դրամ) չափով, և/կամ
- թիմի միավորների նվազեցում 12 միավորի չափով, և/կամ
- նվաճած մրցանակներից զրկում, և/կամ
- տվյալ առաջնության մասնակցությունից զրկում, և/կամ
- թիմին ավելի ցածր առաջնություն տեղափոխում, և/կամ
- որևէ ֆուտբոլային առաջնությանը մասնակցելու / թիմեր ներկայացնելու/ արգելք՝ 1-ից մինչև 3 տարի ժամկետով:

Միաժամանակ յուրաքանչյուր պայմանավորված խաղի արդյունք չեղյալ է համարվում և մեղավոր թիմին տեխնիկական պարտություն է հայտարարվում, իսկ հակառակորդին՝ հաղթանակ:

23.02 Սույն հոդվածի 1-ին կետում նշված արարքների փորձ կատարելը առաջացնում է.

Ֆիզիկական անձանց համար՝

- տուգանք նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև երկուհազարապատիկ (500,000-2,000,000 ՀՀ դրամ) չափով, և/կամ
- որակազրկում /ֆուտբոլիստի համար/՝ 3 ամսից մինչև 1 տարի ժամկետով, և/կամ
- որևէ ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու արգելք՝ 1-ից մինչև 2 տարի ժամկետով:

Իրավաբանական անձանց համար՝

- տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև հինգհազարապատիկի (2,000,000-5,000,000 ՀՀ դրամ) չափով, և/կամ
- թիմի միավորների նվազեցում 6 միավորի չափով, և/կամ

- նվաճած մրցանակներից զրկում:

23.03 Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված արարքների մասին չհայտնելը առաջացնում է՝

- Որակազրկում՝ 3 ամսից մինչև 1 տարի ժամկետով՝ ֆուտբոլիստների համար, և/կամ
- տուգանք նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի (500,000-1,000,000 ՀՀ դրամ) չափով, ներգրավված բոլոր ֆիզիկական անձանց, ներառյալ՝ ֆուտբոլիստների համար, և/կամ
- որևէ ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու արգելքով՝ մինչև 1 տարի ժամկետով:

23.04 Այն անձինք, ովքեր կատարել են սույն հոդվածի 23.02 և 23.03 կետերով նախատեսված արարքները, սակայն կամավոր հայտնել են այդ մասին ՀՖՖ-ին և ակտիվ համագործակցել են ՀՖՖ համապատասխան ստորաբաժանումների հետ, մեղավոր անձանց հայտնաբերման հարցում, կարող են ազատվել սույն հոդվածով նախատեսված պատասխանատվությունից:

Քննարկելով ներկայացված փաստերն ու առկա ապացույցները, կատարելով վերոնշյալ փաստական հանգամանքների, ՀՖՖ կանոնադրության և ներքին կանոնակարգերի համադրում և վերլուծություն, հիմք ընդունելով և փաստարկված համարելով ՀՖՖ Պայմանավորված խաղերի դեմ պայքարի հարցերով փորձագիտական կոմիտեի կողմից իրականացված վերլուծությունն ու պատրաստված զեկույցները, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն

Կողմ	6 ձայն
Դեմ	0 ձայն
Ձեռնպահ	0 ձայն

քվեարկության արդյունքով ՈՐՈՇԵՑ՝

1. Արագած ՖԱ-ին զրկել ՀՀ Առաջին խմբի 2019-2020 մրցաշրջանի առաջնության մասնակցությունից և 2 տարի ժամկետով արգելել Արագած ՖԱ-ի մասնակցությունը (թիմեր ներկայացնելը) ՀՖՖ կողմից կազմակերպվող որևէ ֆուտբոլային առաջնությանը:
2. Չեղյալ համարել հետևյալ խաղերի արդյունքները՝ այդ խաղերում Արագած ՖԱ-ին հայտարարելով տեխնիկական պարտություն, իսկ հակառակորդ թիմերին՝ հաղթանակ.

16/08/2019	Արագած - ԲԿՄԱ
20/08/2019	Վան – Արագած
24/09/2019	Վեստ Արմենիա - Արագած
30/09/2019	Արագած - Անի
06/11/2019	Փյունիկ 2 - Արագած
28/11/2019	Արարատ-Արմենիա 2 - Արագած
08/12/2019	Արագած - Արարատ 2
28/02/2020	Արագած - Դիլիջան
04/03/2020	ԲԿՄԱ - Արագած

3. Տորպեդո ՖԱ-ին զրկել ՀՀ Առաջին խմբի 2019-2020 մրցաշրջանի առաջնության մասնակցությունից և 2 տարի ժամկետով արգելել Տորպեդո ՖԱ-ի մասնակցությունը

(թիմեր ներկայացնելը) ՀՖՖ կողմից կազմակերպվող որևէ ֆուտբոլային առաջնությանը:

4. Չեղյալ համարել հետևյալ խաղերի արդյունքները՝ այդ խաղերում Տորպեդո ՖԱ-ին հայտարարելով տեխնիկական պարտություն, իսկ հակառակորդ թիմերին՝ հաղթանակ.

21/08/2019	Տորպեդո - Արարատ 2
04/10/2019	Ալաշկերտ 2 - Տորպեդո
06/11/2019	Ուրարտու 2 – Տորպեդո
04/03/2020	Տորպեդո - Լոկոմոտիվ
10/03/2020	Արարատ 2 – Տորպեդո

5. Մասիս ՖԱ-ին զրկել ՀՀ Առաջին խմբի 2019-2020 մրցաշրջանի առաջնության մասնակցությունից և 2 տարի ժամկետով արգելել Մասիս ՖԱ-ի մասնակցությունը (թիմեր ներկայացնելը) ՀՖՖ կողմից կազմակերպվող որևէ ֆուտբոլային առաջնությանը:

6. Չեղյալ համարել հետևյալ խաղերի արդյունքները՝ այդ խաղերում Մասիս ՖԱ-ին հայտարարելով տեխնիկական պարտություն, իսկ հակառակորդ թիմերին՝ հաղթանակ.

06/09/2019	Տորպեդո – Մասիս
16/09/2019	Արարատ-Արմենիա 2 – Մասիս
01/10/2019	Արարատ 2 – Մասիս
23/10/2019	Մասիս – Վան
30/10/2019	Տորպեդո – Մասիս
22/11/2019	Ալաշկերտ 2 – Մասիս
28/11/2019	Մասիս - Վեստ Արմենիա
02/12/2019	Անի – Մասիս
08/12/2019	Դիլիջան – Մասիս
07/06/2020	Մասիս – Արարատ-Արմենիա 2
12/06/2020	Լոկոմոտիվ – Մասիս

7. Լոկոմոտիվ ՖԱ-ին զրկել ՀՀ Առաջին խմբի 2019-2020 մրցաշրջանի առաջնության մասնակցությունից և 2 տարի ժամկետով արգելել Լոկոմոտիվ ՖԱ-ի մասնակցությունը (թիմեր ներկայացնելը) ՀՖՖ կողմից կազմակերպվող որևէ ֆուտբոլային առաջնությանը:

8. Չեղյալ համարել հետևյալ խաղերի արդյունքները՝ այդ խաղերում Լոկոմոտիվ ՖԱ-ին հայտարարելով տեխնիկական պարտություն, իսկ հակառակորդ թիմերին՝ հաղթանակ.

26/08/2019	Լոկոմոտիվ – Ալաշկերտ-2
16/09/2019	Լոկոմոտիվ – Անի
01/10/2019	Լոկոմոտիվ – Ուրարտու 2
05/11/2019	Արարատ-Արմենիա 2 – Լոկոմոտիվ
28/11/2019	Լոկոմոտիվ – Արարատ 2
04/03/2020	Տորպեդո – Լոկոմոտիվ
12/06/2020	Լոկոմոտիվ – Մասիս

9. 2 տարի ժամկետով արգելել Երևան ՖԱ-ի մասնակցությունը (թիմեր ներկայացնելը) ՀՖՖ կողմից կազմակերպվող որևէ ֆուտբոլային առաջնությանը:

10. Չեղյալ համարել 01.12.2019 թվականին կայացած Լոռի ՖԱ – Երևան խաղի արդյունքը՝ այդ խաղում Երևան ՖԱ-ին հայտարարելով տեխնիկական պարտություն, իսկ հակառակորդ թիմին հաղթանակ:
11. Յուրի Օկուլին (Արագած ՖԱ գլխավոր մարզիչ, 27.03.1976) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
12. Հակոբ Պարույրի Ֆահրադյանին (Արագած ՖԱ նախագահ) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
13. Եվգենի Կոնյաշինին (Արագած ՖԱ ֆուտբոլիստ, 03.02.2000) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
14. Իլլիա Գլուշիցկիին (Արագած ՖԱ ֆուտբոլիստ, 02.08.1993) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
15. Կիրիլլ Ալեքսանդրի Կոչնևին (Արագած ՖԱ ֆուտբոլիստ, 08.05.1998) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
16. Ալեն Գրիշայի Համբարձումյանին (Արագած ՖԱ ֆուտբոլիստ, 01.03.1992) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
17. Վիտալի Ռդլևիչին (Արագած ՖԱ ֆուտբոլիստ, 19.04.1991) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
18. Արտյոմ Դորոժինսկիին (Արագած ՖԱ ֆուտբոլիստ, 12.11.1995) 3 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 2 միլիոն (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:
19. Միկիտա Ֆիլատովին (Արագած ՖԱ ֆուտբոլիստ, 24.06.1992) 3 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 2 միլիոն (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:
20. Սուրեն Յուրիկի Առաքելյանին (Արագած ՖԱ ֆուտբոլիստ, 12.07.1996) 1 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
21. Մուրադ Հակոբի Ասատրյանին (Արագած ծ ՖԱ ֆուտբոլիստ, 08.02.1996) 1 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
22. Դավիթ Արթուրի Ասլանյանին (Արագած ՖԱ ֆուտբոլիստ, 07.08.1994) 1 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
23. Ռոստիսլավ Կոզարին (Արագած ՖԱ փաստացի սեփականատեր, 19.04.1988) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
24. Հարություն Ալիկի Արմենակյանին (Տորպեդո ՖԱ նախագահ) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
25. Բոգդան Սուխոդուբին (Տորպեդո ՖԱ ֆուտբոլիստ, 09.02.1994) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
26. Էիսուկե Մոհրիին (Տորպեդո ՖԱ ֆուտբոլիստ, 09.04.1994) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
27. Միրոսլավ Դեդային (Տորպեդո ՖԱ ֆուտբոլիստ, 28.05.1999) 1 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
28. Օսման Բաշիրով Սուլեյմանովին (Տորպեդո ՖԱ ֆուտբոլիստ, 15.01.1998) 3 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 2 միլիոն (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:
29. Սերգեյ Յասինսկիին (Տորպեդո ՖԱ սեփականատեր) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
30. Եգոր Լուգովիին (Տորպեդո ՖԱ ֆուտբոլիստ, 09.04.1995) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:

31. Արթուր Տիգրանի Ոսկանյանին (Մասիս ՖԱ սեփականատեր, ֆուտբոլիստ, 30.11.1978) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
32. Արտակ Արկադիի Մելիքյանին (Մասիս ՖԱ նախկին թիմի պետ, նախկին գործադիր տնօրեն, ներկայումս Դիլիջան ՖԱ գործադիր տնօրեն և Մասիս ՖԱ-ի ոչ պաշտոնապես 17% բաժնեմասի բաժնետեր) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
33. Տիգրան Սարգսի Ոսկանյանին (Մասիս ՖԱ 49% բաժնեմասի դե յուրե բաժնետեր) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
34. Վյաչեսլավ Ազաֆոնովին (Մասիս ՖԱ ֆուտբոլիստ, 28.03.1997) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
35. Կիրիլս Պավելի Գրիգորովս (Երևան ՖԱ նախկին ֆուտբոլիստ, Երևան և Մասիս ՖԱ-ների նախկին ոչ պաշտոնապես սեփականատեր, 19.10.1992) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
36. Ռեննան Հելտոր Ալվես Սալդանհային (Մասիս ՖԱ ֆուտբոլիստ, 05.01.1996) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
37. Ալեքսեյ Կուչինին (Մասիս ՖԱ ֆուտբոլիստ, 25.06.1997) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
38. Էրիկս Զեյբոլդսին (Մասիս ՖԱ նախկին գործադիր տնօրեն, 51% բաժնեմասի նախկին բաժնետեր) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
39. Ալեքսեյ Սոլոսինին (ֆուտբոլիստ, Մասիս ՖԱ ոչ պաշտոնապես դարպասապահների մարզիչ, Մասիս ՖԱ ոչ պաշտոնապես 17% բաժնեմասի բաժնետեր 11.08.1987) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
40. Դմիտրո Կլիմակովին (Մասիս ՖԱ ֆուտբոլիստ, Մասիս ՖԱ ոչ պաշտոնապես 17% բաժնեմասի բաժնետեր 05.03.1989) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
41. Սամվել Ալբերտի Սաֆարյանին (Մասիս ՖԱ ֆուտբոլիստ, 22.07.1987) 3 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 2 միլիոն (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:
42. Դիլիառա Շիգապովային (Մասիս ՖԱ դե յուրե 51% բաժնեմասի բաժնետեր) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
43. Դմիտրի Միխայլիչենկոյին (Մասիս ՖԱ ֆուտբոլիստ, 04.08.1996) 1 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
44. Միխայլո Պոպովին (Մասիս ՖԱ ֆուտբոլիստ, 02.07.1996) 3 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 2 միլիոն (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:
45. Եվգենի Պրիյմակին (Մասիս ՖԱ ֆուտբոլիստ, 01.03.1999) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
46. Նիկիտա Ռոդիչևին (Մասիս ՖԱ ֆուտբոլիստ, 21.02.1999) 3 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 2 միլիոն (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:
47. Դանիլ Սվիրիդովին (Մասիս ՖԱ ֆուտբոլիստ, 01.09.1999) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
48. Օլեքսի Բոնդարենկոյին (Մասիս ՖԱ ֆուտբոլիստ, 17.12.1992) 1 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
49. Օլեգ Գումենյուկին (Մասիս ՖԱ և Արագած ՖԱ ֆուտբոլիստ, 03.05.1983) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:

50. Հրաչիկ Վարդգեսի Քանանյանին (Լոկոմոտիվ ՖԱ նախագահ) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
51. Արմեն Հրաչիկի Քանանյանին (Լոկոմոտիվ ՖԱ գործադիր տնօրեն, 27.01.1988) 1 տարի ժամկետով արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ և տուգանել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
52. Սերգեյ Լիտովչենկոյին (Լոկոմոտիվ ՖԱ գլխավոր մարզիչ, 30.01.1979) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
53. Եվգենիյ Զախարչենկոյին (Լոկոմոտիվ ՖԱ ֆուտբոլիստ, 11.03.1996) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
54. Տիմոֆիյ Շերեմետային (Լոկոմոտիվ ՖԱ ֆուտբոլիստ, 06.10.1995) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
55. Իգոր Բիկովսկիին (Լոկոմոտիվ ՖԱ ֆուտբոլիստ, 05.09.1996) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
56. Արտեմ Պիլիպենկոյին (Լոկոմոտիվ ՖԱ ֆուտբոլիստ, 21.08.1995) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
57. Իլլիա Խոդուլիային (Լոկոմոտիվ ՖԱ ֆուտբոլիստ, 16.06.1989) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
58. Սերգեյ Դյաչուկին (Լոկոմոտիվ ՖԱ ֆուտբոլիստ, 11.09.1989) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
59. Դմիտրո Կոպիտովին (Լոկոմոտիվ ՖԱ ֆուտբոլիստ, 29.05.1998) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
60. Անտոն Անտոշինին (Լոկոմոտիվ ՖԱ ֆուտբոլիստ, 21.05.1998) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
61. Յարոսլավ Յասնիսկիին (Լոկոմոտիվ ՖԱ ֆուտբոլիստ, 19.06.2000) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
62. Անատոլի Պիսկովեցին (Լոկոմոտիվ ՖԱ նախկին գլխավոր մարզիչ, 27.05.1984,) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
63. Մաքսիմ Դրոբնիյին (Լոկոմոտիվ ՖԱ փաստացի սեփականատեր/ներդրող, 01.11.1984) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
64. Զաֆեթթ Դել Պորտիլո Բոլանոյին (Երևան ՖԱ ֆուտբոլիստ, 23.11.1991, Կոլումբիա) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
65. Լոկվա Անտոնիո Զորջեսին (Երևան ՖԱ ֆուտբոլիստ, 26.06.2000, Կոնգո) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
66. Յանիս Կրումինսին (Երևան ՖԱ ֆուտբոլիստ, 09.01.1992, Լատվիա) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
67. Դենիս Սերգեյի Լյուբիմովին (Երևան ՖԱ ֆուտբոլիստ, 19.03.1998, ՌԴ) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:
68. Պապե Դեմբա Դիյեին (Երևան ՖԱ ֆուտբոլիստ, 25.03.1998, Սենեգալ) ցմահ արգելել զբաղվելու որևէ ֆուտբոլային գործունեությամբ:

Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից յոթ օր հետո և կարող է բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե այն ստանալու պահից (ներառյալ՝ էլեկտրոնային փոստի միջոցով Որոշման ստացումը) յոթ օրվա ընթացքում:

Շահագրգիռ անձինք կարող են ստանալ սույն Որոշման համար հիմք հանդիսացող նյութերը և/կամ բողոքարկել Որոշումը ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ սահմանված ընթացակարգի համաձայն: Երևան ՖԱ, Լոկոմոտիվ ՖԱ, Մասիս ՖԱ, Արագած ՖԱ և Տորպեդո ՖԱ ակումբները պետք է սույն Որոշման կայացման մասին տեղեկացնեն իրենց ներկա/նախկին ֆուտբոլիստներին/ բաժնետերերին և այն պաշտոնյաներին, որոնց վերաբերյալ սույնով կայացվել է որոշում: